

## 5-րդ ԷՆԵՐԳԱԲԼՈՎԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

300 ՄՎտ հզորությամբ 5-րդ Էներգաբլոկի կառուցման աշխատանքները սկսվել են 1980 թվականին: ԽՍՀՄ փլուզման հետեւանքով ՀՀ Էներգահամակարգում առկա հզորությունների բեռնվածությունը կտրուկ նվազել է, որի արդյունքում բլոկի կառուցման աշխատանքները մնացել են անավարտ:

Իրան-Հայաստան կառուցվող գազատարով ներկրվելիք գազի դիմաց Էլեկտրաէներգիայի մատակարարման հայկական կողմի պարտավորությունների կատարումը ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ավարտին հասցնել 5-րդ Էներգաբլոկի շինարարության աշխատանքները: Էներգաբլոկի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով որոշում է կայացվել այն համալրել 140 ՄՎտ հզորությամբ գազատուրբինային տեղակայանքով, ինչը հնարավորություն կտա նվազեցնել Էներգաբլոկի կողմից 1 ԿՎտժ-ի արտադրության համար բնական գազի ծախսը մոտ 16-17%-ով:

### Գործարքի նկարագիր

Անավարտ շինարարության օբյեկտի գնահատված արժեք 248.8 մլն. ԱՄՆ դոլար

Ներդրում բլոկի վերակառուցման – 140 ՄՎտ հզորությամբ գազատուրբինային տեղակայանքով համալրման աշխատանքներում

մինչեւ 180 մլն. ԱՄՆ դոլար

#### Ներդրումներ ընդամենը

430 մլն. ԱՄՆ դոլար

Ընդհանուր դրվածքային հզորություն

440 ՄՎտ

Ներդրումները բերված 1 ՄՎտ-ի

980 հազ. ԱՄՆ դոլար:

Նշված ներդրումների վերադարձը (ոչ սակագնով, ոչ որեւէ այլ եղանակով) ապահովելու վերաբերյալ ՀՀ Կառավարությունը որեւէ պարտավորություն չի ստանձնել:

### Ծանոթություն՝

*Նմանատիպ նոր Էներգաբլոկի ամբողջական կառուցման ժամանակ 1 ՄՎտ-ի արժեքը մոտավորապես կազմում է 600-650 հազ. ԱՄՆ դոլար: Փաստորեն, 5-րդ Էներգաբլոկի անավարտ շինարարության գույքային համալիրի վաճառքից գանձվող 248.8 մլն. ԱՄՆ դոլար գումարը բավարար է նմանատիպ շուրջ 400 ՄՎտ դրվածքային հզորությամբ նոր կայանի կառուցման համար:*

- Բացի նշված ներդրումային առաջարկից, ոչ մի այլ պոտենցիալ ներդրողի կողմից նշված ծրագիրը նմանատիպ պայմաններով իրականացնելու առաջարկ չի ստացվել:

- Գործարքի իրականացումը վարկային ռեսուրսների ներգրավմամբ կառաջացներ լրացուցիչ շուրջ 100 մլն. ԱՄՆ դոլարի ֆինանսական բեռ (10 տարվա մարման – տարեկան 7% պայմաններով) եւ բյուջեն չէր համալրվի վաճառքի գումարով: